Գովազդային վիճակախաղի կանոնները

1. Ընդհանուր դրույթներ

«88» և «Ծիրան» սուպերմարկետների ցանցերը 28.06.2026 -ից համատեղ (կազմակերպիչ) իրականացնում են գովազդային վիճակախաղ, որն ուղղված է սպառողների շրջանում ապրանքների կամ ծառայությունների առաջխաղացմանը կամ իրացման ծավալների մեծացմանը :

2. Մասնակցության պայմաններ

Գովազդային վիճակախազին կարող են մասնակցել ֆիզիկական անձինք, ովքեր՝

- կատարել են գնում «88» կամ «Ծիրան» սուպերմարկետներում նշված ժամանակահատվածում 28.06.2026-23.09.2026
- յուրաքանչյուր գնումը կազմում է **5000 դրամ և ավելի**

  գնման մեջ ներառված են նշված **ապրանքներից առնվազն մեկը՝ Ալյուր «Նալբանդյան», By Nalbandyan արտադրանք (ջրեղեն, ըմպելիքներ, խմորեղեն), հավկիթ**
- գնման ժամանակ օգտագործվել է անվանական **բոնուսային քարտ**

3. Մասնակցության մեխանիզմ

1. Յուրաքանչյուր համապատասխան գնման դեպքում հաճախորդը ստանում գնման կտրոն
2. Կտրոնը հանդիսանում է մասնակցության հիմք
3. Մասնակիցը պարտավոր է՝
   - պահպանել գնման կտրոնը մինչև գովազդային վիճակախաղի ամփոփման օրը
   - գովազդային վիճակախաղի օրը ներկայանալ նշված վայր կամ փոխանցել կտրոնը խանութին
   - ունենալ անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ ID քարտ)
4. Մասնակիցը տեղում՝
   - իր կտրոնը տեղադրում է գովազդային վիճակախաղի համար նախատեսված թափանցիկ արկղում

Մեկ կտորնը = մեկ մասնակցության հնարավորություն

4. Գովազդային վիճակախաղի անցկացում

- Գովազդային **վիճակախաը** իրականացվում է հրապարակային և պատահական ընտրության սկզբունքով
- Թմբուկից ընտրվում են հաղթող կտորները պատահական ընտրությաբ
- Կազմակերպիչները իրավունք ունեն վերանայել **գովազդային վիճակախաղի ամփոփման ձևաչափը:**

5. Մրցանակներ

Սահմանվում են հետևյալ մրցանակները՝

Գլխավոր մրցանակ

- **1 բնակարան**

  Բնակարանի մասին մանրամասեն տեղեկությունը կներկայացվի նշված ժամանակահատվածի ընթացքում

Լրացուցիչ մրցանակներ

- Գովազդային վիճակախաղի ժամանակահատվածում ամեն շաբաթ առցանց տարբերակով առցանց ծրագրով կամ այլ ձևաչափով հրապարակվելու են մասնակիցների բոնուս քարտերի համարներ, որոնք ստանալու են 100% մասնակցող կտրոնների գումարների վերադարձ բոնուսային միավորների տեսքով կիրառված բոնուսային քարտերի հաշվին:

Այլ լրացուցիչ մրցանակների քանակը և տեսակները սահմանվում են Կազմակերպչի կողմից:

6. Հաղթողի որոշում և նույնականացում

Հաղթող ճանաչվելու համար պարտադիր է՝

- հասանելիությունը խաղարկության պահին
- ներկայացնել՝
  - համապատասխան գնման կտրոն
  - բոնուսային քարտը
  - անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ ID քարտ)

Բոլոր տվյալները պետք է նյունականացնեն 1 անձի:

Տվյալների անհամապատասխանության դեպքում Կազմակերպիչը իրավունք ունի չեղարկել մասնակցությունը:

7. Սահմանափակումներ մրցանակի վերաբերյալ

- Մրցանակները չեն կարող փոխարինվել դրամական համարժեքով
- Մրցանակը ենթակա չէ փոխանակման կամ փոխանցման երրորդ անձանց՝ մինչև իրավական ձևակերպումը
- Եթե հաղթողը հրաժարվում է մրցանակից կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը սահմանված ժամկետում, Կազմակերպիչը իրավունք ունի չեղարկել արդյունքը և շարունակել գովազդային վիճակախաղը:

8. Այլ դրույթներ

- Կեղծ կամ անընթեռնելի կտրոնները չեն մասնակցում խաղարկությանը: Կտրոնները ստուգվելու են տեղում:
- Կազմակերպիչը չի կրում պատասխանատվություն կորցրած կտրոնների համար
- Մասնակիցը իր մասնակցությամբ համաձայնում է սույն կանոններին